ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻ ԵՎ 3-ՐԴ ՀԱՐԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-25/26»

ք. Երևան «16» Մայիս 2025թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սիրականյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կառավարական թիվ 3 շենքի 1-ին հարկում տեղակայված քաղաքացիների ընդունելության բաժնի աշխատասենյակի և 3-րդ հարկում տեղակայված վարչական որոշ տարածքների ընթացիկ նորոգման շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 80 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների

տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի

միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 10 042 500 (տաս միլիոն քառասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից 1 673 750 (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության միջոցներ:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը

կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ
ք. Երևան, կառավարական տուն 3	ք.Երևան, Մամիկոնյայնց 3 շ., բն.24
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Արաբկիր մասնաճյուղ
Հ/Հ՝ 900011019321	Հ/Հ՝ 2471204281200000
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 00197033
Գլխավոր քարտուղար	«ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ-ի տնօրեն
---------- Ս. Մուրադյան	---------- Ա.Սիրականյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 16 » «Մայիս» 2025 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-25/26» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻ ԵՎ 3-ՐԴ ՀԱՐԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ներառյալ վերադիր ծախսեր՝ 13.3%, շահույթ 11%, չնախատեսված աշխատանքեր՝ 3%, առանց ԱԱՀ. հազ.դրամ	Ընդամենը (հազ. դրամ)	Աշխատանքերի տեսակարար կշիռը ամբողջի մեջ
1	2	3	4	5	6	7	8
	I	**Քանդման աշխատանքներ**					
1	11-225	Գաջի սվաղի քանդում պատերից	քմ	80.0	1.03	82.41	
2	1-1229	Գաջի սվաղի քանդում առաստաղից	քմ	40.0	1.16	46.35	
3	14-320	Հին ներկի մաքրում պատերից	քմ	910.0	0.26	234.35	
4	14-321	Հին ներկի մաքրում առաստաղից	քմ	400.0	0.26	103.01	
5	23-228	Շին աղբի բարձում և տեղափոխում 10կմ	տ	5.0	5.54	27.68	
6	Շուկա	Հին այրված էլեկտրական լարերի ապամոնտաժում	գծ/մ	140.0	0.64	90.13	
7	Շուկա	3-րդ հարկի հին մասնաթևի աջակողմյան և ձախ թևում զբաղեցրած աշխատասենյակների դռների շրջանակների ապամոնտաժում, ըստ անհրաժեշտության, մինչև	հատ	11.0	1.29	14.16	

8	Շուկա	Կառավարական թիվ 3 շենքի նոր և հին մասնաթևերի նախասրահում և միջանցքներում հին էլեկտրական վահանակների ապամոնտաժում	հատ	6.0	1.03	6.18	
9	Շուկա	Միջանցքներում, հին մաշված, այրված շրիշակների քանդում, մինչև՝	գծ/մ	100.0	0.64	64.38	
10	Շուկա	Միջանցքում այրված մանրահատակի հեռացում և դրա հիմքի մաքրում	հատ	7.0	0.97	6.76	
		Ընդամենը				***675.43***	
	II	**Հարդարման և (վերանորոգման) աշխատանքներ**					
	1	***Միջանցքի հարդարման աշխատանքեր***					
11	15-246-1	Միջանցքների Պատերի գաջի սվաղ	քմ	80.00	2.45	195.72	
12	15-247-1	Միջանցքների առաստաղի գաջի սվաղ	քմ	40.00	3.09	123.61	
13	14-418	Պատերի ծեփածածկում և ներկում լավորակ լվացվող լատեքսային ներկով	քմ	900.0	1.42	1,274.75	
14	14-419	Առաստաղի ծեփածածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	քմ	400.0	1.55	618.06	
15	ինֆոր.	Միջանցքի փայտե դռների նորոգում (հղկում, հարթեցում և ներկում)	հատ	4.0	64.38	257.53	
18	Շուկա	Հին մասնաթև տանող նախասրահի պատի սալիկների վերականգնում	քմ	0.5	9.01	4.06	
19	Շուկա	Միջանցքի մանրահատակի վերականգնում վնասված տեղերում /հաճար/ բիտումի մածիկի վրա, մինչև	քմ	6.0	6.44	38.63	
20	Շուկա	Հին և վնասված շրիշակների փոխարինում լամինացված նոր շրիշակներով, մինչև՝	գծ/մ	110.0	1.28	140.80	

21	8-599-1	Միջանցքներում լուսավորության վերանորոգում, այդ թվում՝ ա) չաշխատող լուսատուների փոխարինում ԼԷԴ լամպերով, մինչև	հատ	20	3.34	66.80	
22	Շուկա	բ) վնասված հոսանքի լարերի փոխարինում 2*2.5 արտաքին կանալներով / ըստ անհրաժ./	գծ/մ	440	1.66	730.40	
23	8-591-8 8-591-2	գ) Անջատիչների և վարդակների փոխարինում ըստ անհրաժեշտության / ըստ անհրաժ./	հատ	20	3.61	72.11	
24	Շուկա	Էլեկտրական և հեռահաղորդակցության (ինտերնետի հոսախոսային ցանցի) մալուխների համար միջանցքների պատերի կորոբների փոփարինում նորերով. կորոբների չափերը առնվազն 10սմx20սմ , որոնք պետք է հնարավորություն տան անհրաժեշտության դեպքում մալուխների նորոգման կամ փոխարինվեն (պետք է ունենան ելքային պատուհաններ): Նյութը՝ ոչ ծխացող	գծ/մ	210	1.29	270.40	
25	Շուկա	Էլեկտրական վահանակների փոխարինում /ըստ անհրաժեշտության/ մինչև՝	հատ	6	12.88	77.26	
26	Շուկա	Միջանցքի պատի պաշտպանիչ վնասված տախտակների փոխարինում	գծ/մ	5.7	6.57	37.43	
27	13-143	Սանհանգույցների մուտքերի մանրահատակի վերականգնում պրեսգրանիտե սալիկներով	քմ	3	7.98	23.95	
	2	***Աշխատասենյակների հարդարման (ընթացիկ նորոգման) աշխատանքեր***					
28	Շուկա	Վարչական տարածքի հին մասնաթևի աջակողմյան և ձախակողմյան հատվածներում զբաղեցրած աշխատասենյակների դռների շրջանակների նորոգում՝ (ամրացում կամ փոխարինում և ներկում) ըստ անհրաժեշտության, մինչև՝	հատ	11.0	64.38	708.20	

29	16-134	Նոր մասնաթևի աշխատասենյակներիի դռների փականների նորոգում ըստ անհրաժեշտության, մինչև՝	հատ	20.0	19.31	386.29	
30	14-419	352 և 353 աշխատասենյակների ընթացիկ նորոգում, այդ թվում՝ 1) Առաստաղի ծեփածածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	քմ	48	1.55	74.17	
31	14-418	2) Պատերի ծեփածածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	քմ	90	1.42	127.48	
32	8-599-1	Լուսատուների փոխարինում ԼԷԴ լամպերով	հատ	10	3.34	33.40	
33	Շուկա	բ) վնասված հոսանքի լարերի փոխարինում 2*2.5 արտաքին կանալներով / ըստ անհրաժ./	գծ/մ	80	1.66	132.88	
34	8-591-8 8-591-2	Էլեկտրական վարդակների և անջատիչների փոխարինում հողանցման հպակներ ունեցող երկտեղանոց վարդակներով, և երկստեղնավոր անջատիչներով նշված աշխատասենյակներում ըստ անհրաժեշտության, մինչև՝	հատ	10	3.61	36.05	
35	15-82	Վարչական տարածքի նոր մասնաթևի աջ հատվածում տեղակայված (գլխավոր քարտուղարի) ընդունարանի աջ հատվածում գտնվող աշխատասենյակի (331 աշխատասենյակ) մասնակի նորոգում, այդ թվում՝ 1) հատակի սալիկների փոխարինում նորերով	քմ	7	7.73	54.08	
36	Շուկա	2) Աշխատասենյակի միջնապատի կառուցում առկա պատին ուղղահայաց ուղղությամբ, որը հատվում է պատի հետ դեռնից դեպի արևելք 40 սմ հեռավորությամբ: Պատը կառուցվում է 10 սմ լայնության պեմզաբլոկներով: Հարթեցում՝գաջե սվաղով:	քմ	8	5.41	43.26	
37	Շուկա	3) լվացարանի փոխարինում	հատ	1	21.88	21.88	
38	14-419	4) սենյակի առաստաղի հարթեցում և ներկում բարձրորակ լատեքս ներկով	քմ	19	1.55	29.36	

39	14-418	5) սենյակի պատերի հարթեցում և ներկում բարձրորակ լատեքս ներկով	քմ	35	1.42	49.57	
40	Շուկա	6) Լվացարանի կահույքի փոխարինում նոր խոհանոցային կահույքով, որը ներառում է լվացարանի պահարան և մեկ պահարան սպասքի համար, պատի երկու պահարաններ, խոհանոցային սեղան՝ երկու խոյանոցային աթոռով: Չափերը, գույնը և ձևավորումը պատվիրատուի համաձայնությամբ):	հավաքածու	1	203.45	203.45	
	Նախարարի չորս տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, նախարարի չորս տեղակալների, նախարարի օգնականի սենյակների ընթացիկ վերանորոգում, այդ թվում՝						
41	14-419	1) Նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, նրա ընդունարանի, գլխավոր քարտուղարի տեղակալի սենյակների առաստաղների հարթեցում, ներկում լավորակ լատեքս ներկով (323, 330, 332, 333, 334, 335, 336, 337, 338 սենյակներ)	քմ	240	1.56	374.40	
42	14-418	2) Նախորդ տողում թվարկված աշխատասենյակներ պատերի հարթեցում, ներկում լավորակ լատեքս ներկով	քմ	350	1.42	497.00	
43	Շուկա	բ) վնասված հոսանքի լարերի փոխարինում 2*2.5 արտաքին կանալներով / ըստ անհրաժ./	գծ/մ	120	1.66	199.20	
44	8-599-1	3) Լուսատուների փոխարինում ԼԷԴ լամպերով վերը նշված աշխատասենյակներում	հատ	52	3.34	173.68	
45	8-591-8 8-591-2	4) Էլեկտրական վարդակների և անջատիչների փոխարինում հողանցման հպակներ ունեցող երկտեղանոց վարդակներով, և երկստեղնավոր անջատիչներով նշված աշխատասենյակներում ըստ անհրաժեշտության, մինչև՝	հատ	50	3.60	180.00	
46	Շուկա	6) Նախարարի տեղակալի նախարարի օգնականի, նախարարի տեղակալի օգնականի աշխատասենյակների մանրահատակների հղկում, լաքապատում բարձրորակ լաքով (336, 337, 338)	քմ	75	8.25	618.75	

47	Շուկա	Տարբեր աշխատասենյակներում շերտավարագույրներ փոխարինում ըստ անհրաժեշտության	քմ	150	7.59	1,138.50	
48	14-419	Քաղաքացիների ընդունելության բաժնի մասնակի նորոգում (364 սենյակ), այդ թվում՝ 1) Առաստաղի ծեփածածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	քմ	32	1.54	49.28	
49	14-418	1) Պատերի ծեփածածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	քմ	60	1.41	84.60	
	Նախարարի աշխատասենյակի, ընդունարանի, խորհրդակցության և հանգստ սենյակների ընթացիկ վերանորոգում						
50	14-419	այդ թվում՝ 1) Նախարարի աշխատասենյակի, ընդունարանի և խորհրդակցության սենյակի առաստաղների հարթեցում և ներկում լավորակ լատեքսային ներկով	քմ	180	1.54	277.20	
51	14-418	2) Նախարարի աշխատասենյակի, ընդունարանի և խորհրդակցության սենյակի պատերի հարթեցում և ներկում լավորակ լատեքսային ներկով	քմ	310	1.41	437.10	
52	8-599-1	3) Նախարարի աշխատասենյակի ընդունարանի և խորհրդակցության սենյակի լուսատուների փոխարինում, ԼԷԴ լամպերով	հատ	40	7.73	309.20	
	3	***Այլ աշխատանքներ***					
53	Շուկա	Դռների ցուցանակների պատվիրում. Չափերը՝ 30X15 սմ: Ցուցանակների վրա վերևի նեղ հատվածում գրվում է ստորաբաժանման ղեկավարի անունը և ազգանունը, որը պետք է շարժական լինի և անհրաժեշտության դեպքում փոխարինվի նոր անուն-ազգանուն կրող շերտով, իսկ ներքևի լայն շերտի ձախ մասում գրվում է սենյակի համարը, իսկ աջ մասում ստորաբաժանման կամ պաշտոնատար անձանց	հատ	40	3.10	124.00	

		անունը և ազգանունը. մինչև 60 հատ: Ցուցանակների գույնը և դիզայնը՝ պատվիրատուի հետ համաձայնեցնելով					
54	Շուկա	Նախարարության նոր մասնաթև տանող դռների կողքերին փակցվող մեծ երկու ցուցանակների պատվիրում. Չափերը՝ 60x90սմ, շրջանակի հետ միասին՝ 94x64: Ցուցանակը պետք է լինի չժանգոտվող մետաղից և վրան վերևի մասում կենտրոնում պետք է լինի ՀՀ Զինանշանը (չափերը՝ 16x16): Զինանշանից ներքև մեկ ցուցանակի վրա պետք է հայատառ փորագրվի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ». երկրորդի վրա՝ նախարարության «МИНИСТЕРСТВО ТРУДА И СОЦИАЛЬНЫХ ВОПРОСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ» և «MINISTRY OF LABOUR AND SOCIAL AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA» ռուսերեն և անգլերեն անվանումները: Ցուցանակների շրջանակների գույնը և Զինանշանի և ընդհանրապես ցուցանակների դիզայնը պատվիրատուի հետ համաձայնեցնելով:	հատ	2	64.45	128.90	
55	Շուկա	Գույքի պահպանման նպատակով տարածքի հին և նոր մասնաթևերը միացնող նախասրահի աջ անկյունում պահեստային սենյակի կառուցում մետաղապլաստե պրոֆիլներով. Չափերը՝ լ 2,5 x ե 2,5 x բ 3,15: Սենյակի երկու կողմում՝ մետաղե կամ փոխարինող դիմացկուն նյութով դարակների մոնտաժում, մեկ դարակի բարձրությունը՝ 0,4մ: Դուռը՝ հարավային կողմից (Չափերը՝ լ 1,4 x բ 2,1):	Սենյակ	1	308.00	308.00	
		Սանհանգույցների վերանորոգում, այդ թվում՝					
56	Շուկա	1) դռների նորոգում կամ փոխարինում ըստ անհրաժեշտության, մինչև	հատ	11	16.40	180.40	
57	Շուկա	2) Միզարանների տեղադրում	հատ	2	9.50	19.00	
58	Շուկա	3) Լվացանների ծորակների փոխարինում ըստ անհրաժեշտության	հատ	6	16.06	96.35	

59	15-82	4) Վարչական տարածքի Նոր մասնաթևի աջ միջանցքի սանհանգույցի հատակի սալիկների փոխարինում պրեսգրանիտե սալիկներով	քմ	5	7.70	38.50	
60	15-83	4) Պատերի ջարդված սալիկների նորոգում փոխարիոնում, ըստ անհրաժեշտության, մինչև՝	քմ	2	7.44	14.88	
61	Շուկա	5) Կախովի առաստաղների փոխարինում, մինչև՝	հատ	9	9.50	85.50	
62	Շուկա	6) Ավտոմատ օդափոխիչների տեղադրում զուգարաններում	հատ	10	11.39	113.90	
		Ընդամենը				***11,279.91***	
		Ընդհանուրը՝ առանց ԱԱՀ				***11,955.34***	
		Ընդհանուրը, ներառյալ՝ ԱԱՀ 20%				***14,346.40***	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
ք. Երևան, կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019321
ՀՎՀՀ՝ 01506515
Գլխավոր քարտուղար՝

Ս. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ
ք.Երևան, Մամիկոնյանց 3 շ., բն.24
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Արաբկիր
մասնաճյուղ
Հ/Հ՝ 2471204281200000
ՀՎՀՀ՝ 00197033
«ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ս. Սիրունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 16 » «Մայիս» 2025 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-25/26» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Կառավարական թիվ 3 շենքի 1-ին հարկում տեղակայված քաղաքացիների ընդունելության բաժնի աշխատասենյակի և 3-րդ հարկում տեղակայված վարչական որոշ տարածքների ընթացիկ նորոգման շինարարական աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	*Կառավարական թիվ 3 շենքի 1-ին հարկում տեղակայված քաղաքացիների ընդունելության բաժնի աշխատասենյակի և 3-րդ հարկում տեղակայված վարչական որոշ տարածքների ընթացիկ նորոգման շինարարական աշխատանքներ*	*Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը*	*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օր, սակայն ոչ ուշ, քան 2025թ. նոյեմբերի 1-ը:*

***որոշ աշխատանքներ, օրինակ՝ լուսավորության վերանորոգման աշխատանքները, ըստ անհրաժեշտության կարող են ընթանալ մինչև 2025թ. նոյեմբերի 1-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019321
ՀՎՀՀ՝ 01506515
Գլխավոր քարտուղար

---------- Ս. Մուրադյան
(ստորագրություն)
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ
ք.Երևան, Մամիկոնյանց 3 շ., բն.24
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Արաբկիր մասնաճյուղ
Հ/Հ՝ 2471204281200000
ՀՎՀՀ՝ 00197033
«ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝

---------- Ա.Մրուանյան
(ստորագրություն)
L.S.

Հավելված թիվ 3
«16» «Մայիս» 2025 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-25/26» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/1	Կառավարական թիվ 3 շենքի 1-ին հարկում տեղակայված քաղաքացիների ընդունելության բաժնի աշխատասենյակի և 3-րդ հարկում տեղակայված վարչական որոշ տարածքների ընթացիկ նորոգման շինարարական աշխատանքներ	-	-	-	-	3,512,197	5,021,250	5,858,125	6,695,000	7,531,875	8,368,750	9,205,625	10,042,500	**10,042,500**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019321
ՀՎՀՀ՝ 01506515
Գլխավոր քարտուղար

---------- Ս. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ
ք.Երևան, Մամիկոնյայնց 3 շ., բն.24
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Արաբկիր մասնաճյուղ
Հ/Հ՝ 2471204281200000
ՀՎՀՀ՝ 00197033
«ԱՇ-ԳՈԳ» ՍՊԸ-ի տնօրեն

---------- Ա. Պորականյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » « » 2025 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-25/26» ծածկագրով պայմանագրի

Կապալառու	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կապալառու՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կապալառու կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
« » « » 2025 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-25/26» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված թիվ 5
« » « » 2025 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-25/26» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
կապալառուի անվանումը

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.